

ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ  
ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ  
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Երևան  
2024

# Բովանդակություն

|   |   |
|---|---|
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....  | 1 |
| 1.1. ԻՆՉ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՈՒՐ ԵՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ .....                  | 1 |
| 1.2. ՈՒ՛մ վրա են տարածվում Կանոնները.....                           | 1 |
| 1.3. Փոփոխություններ և լրացումներ Կանոններում .....                 | 1 |
| 1.4. Որոշում կայացնելու Էթիկան .....                                | 2 |
| 2. ԲԻԶՆԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՐՈՒՄ .....                                | 2 |
| 2.1. Օժանդակում Վիվա-ի ռազմավարության իրականացմանը .....            | 2 |
| 2.2. Շահերի բախման կարգավորում և այլ աշխատանքային գործընթացներ..... | 2 |
| 2.3. Պայմանագրային հարաբերություններ և Մատակարարների ստուգում ..... | 3 |
| 2.4. Անբարեխիղճ առևտրային աշխատանքային գործընթացներ.....            | 3 |
| 2.5. Վիվա-ի և երրորդ անձանց ակտիվների պաշտպանություն .....          | 4 |
| 3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄ .....                                    | 4 |
| 3.1. Օրենսդրության պահպանում.....                                   | 4 |
| 3.2. Կոռուպցիայի և կաշառակերության ցանկացած ձևի արգելում.....       | 4 |
| 3.3. Հակամենաշնորհային օրենսդրության պահպանում .....                | 5 |
| 3.4. Առևտրային սահմանափակումներ.....                                | 5 |
| 3.5. Թափանցիկ հաշվառում և հավաստի տեղեկատվության տրամադրում .....   | 5 |
| 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ .....        | 5 |
| 4.1. Կայուն զարգացում եւ ազդեցություն տեղական համայնքի վրա.....     | 5 |
| 4.2. Շրջակա միջավայրի պաշտպանություն .....                          | 6 |
| 4.3. Մարդու իրավունքներ.....  | 6 |
| 5. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....                           | 6 |

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. ԻՆՉ ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՈՒՐ ԵՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Վիվա», «Ընկերություն»), սույն Կանոնների տեքստում՝ Վիվա-նշանակում է «Վիվա Արմենիա» ՓԲԸ) աշխատելու շատ դիմամիկ է: Վիվա-ն ձգտում է հաստատել գործընկերային հարաբերություններ առաջին հերթին ընկերությունների միջև՝ անկախ ընկերությունների ղեկավարների կամ շարքային աշխատակիցների փոփոխությունից: Վիվա-ի բոլոր աշխատակիցները ձգտում են հասնել լավագույն արդյունքի և ընդունում են, որ բիզնեսի հաջողությունը պայմանավորված է յուրաքանչյուրի աշխատանքից:

Վիվա-ն հետևում է համագործակցության այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են արդար մրցակցությունը, արդար առևտրային պրակտիկայի պահպանումը, կայուն զարգացումը, որակը, օրենքների և վարքագծին վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքը, ամենաբարձր չափորոշիչների պահպանումը: Վիվա-ի սպառողները ակնկալում են միևնույն վարքագիծը Ընկերության գործընկերներից, մասնավորապես մեր Մատակարարներից<sup>1</sup>:

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի Մատակարարի գործարար վարքագծի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) տեղադրված են Ընկերության կայքում և հասանելի են բոլորին: Սույն Կանոնների դրույթներում նկարագրված են այն նվազագույն չափորոշիչները, որոնց պետք է համապատասխանեն Վիվա-ի Մատակարարները: Այնուամենայնիվ, Վիվա-ն չի սահմանափակում Մատակարարների կողմից սույն Կանոններով նախատեսվածից ավելի բարձր չափանիշների հետևելը:

Վիվա-ն աջակցում և Վիվա- Մատակարարների համար իրականացնում է Կանոններով սահմանված պահանջների մասին ուսուցման ծրագիր, որի ուշադրության կենտրոնում ռիսկերն են: Ծրագիրն իրականացվում է հատուկ մշակված ուսուցման համակարգի միջոցով կանոնավոր կերպով, առկա, էլեկտրոնային կամ այլ հասանելի ձևաչափով:

## 1.2. ՈՒՄ Վրա ԵՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կանոնների դրույթները տարածվում են Վիվա-ի բոլոր Մատակարարների վրա, ինչպես նաև Վիվա-ի անունից և/կամ ի շահ վերջինիս գործողություններ իրականացնելու համար Մատակարարի կողմից ներգրավված ցանկացած երրորդ անձանց վրա:

Վիվա-ի հետ գործարար հարաբերությունների մեջ մտնելով՝ Մատակարարը հաստատում է, որ կարողացել է սույն Կանոնները, համաձայն է դրանց դրույթներին և ընդունում է, որ Վիվա-ի հետ բոլոր առկա և ապագա համաձայնություններում և գործարար հարաբերություններում հավատարիմ կմնա սույն Կանոնների դրույթներին: Ընկերությունն ակնկալում է, որ Մատակարարը կապահովի նաև սույն Կանոնների պահպանումը իր դուստր և կախյալ ընկերությունների, ղեկավարության, աշխատակիցների, կապալառուների, միջնորդների, գործակալների, մատակարարների և այլ անձանց կողմից, որոնք ներգրավվում են Վիվա-ի առջև ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում:

## 1.3. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

Կանոնները պարբերաբար վերանայվում են և ցանկացած պահի կարող են փոփոխվել՝ հաշվի առնելով գործող օրենսդրությունը, լրացվել, այդ թվում՝ առանձին նորմատիվային փաստաթղթերով՝ առանց նախնական ծանուցման:

Կանոնները հրապարակային փաստաթուղթ է, որին կարելի է ծանոթանալ ընկերության պաշտոնական կայքում <https://www.mts.am/en/about-us/compliance-and-code-of-ethic>:

Եթե Կանոնների որևէ մաս հակասում է տեղական օրենքներին կամ նորմատիվային ակտերին, ապա կիրառվում են սույն Կանոնների միայն այն բաժինները, որոնք թույլատրված են կիրառելի օրենքներով և նորմատիվային ակտերով:

---

<sup>1</sup> Զանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որը ներգրավվում է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի անունից և/կամ շահերից ելնելով գործողություններ իրականացնելու համար կամ ապրանքատեսակների մատակարարման, աշխատանքների կատարման կամ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին համապատասխան ծառայությունների մատուցման համար (ներառյալ՝ գնումների կատեգորիաները և այն կատեգորիաները, որոնք առնչություն չունեն գնումների հետ) ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ վաճառողներ և մատակարարներ, դիլերներ և դիստրիբյուտորներ, անշարժ գույքի սեփականատերեր և/կամ տիրապետողներ, մասնագիտական ծառայությունների մատակարարներ, խորհրդատուներ, գործակալներ, միջնորդներ, այլ երրորդ անձինք:

## 1.4. Որոշում կայացնելու եթիկան

Կանոնները սահմանում են վարքագծի և որոշումների ընդունման հիմնական սկզբունքները, սակայն անհնար է կանխատեսել բոլոր հավանական իրավիճակները:

Եթե չգիտեք՝ ինչպես վարվել, տվեք ձեզ հետևյալ հարցերը.

- Սա օրինակա՞ն է:
- Սա ազնի՞վ և արդարացի՞ է:
- Սա համապատասխանո՞ւմ է Վիվա-ի շահերին:
- Սա համապատասխանո՞ւմ է ընկերության կանոններին:
- Ես լիազորվա՞ծ եմ սա անել:
- Ես ինձ լավ կզգա՞մ, եթե իմ գործողությունների մասին տեղեկատվությունը հրապարակվի ՉՍԼ-ներում:

Եթե այս հարցերից որևէ մեկի պատասխանը «ոչ» է, անհրաժեշտ է զերծ մնալ այն գործողությունից, որը պատրաստվում էիք կատարել:

Եթե Կանոններում ընդգրկված թեմաների վերաբերյալ հարցեր ունեք, կասկածում եք՝ արդյոք իրավիճակը կանոնակարգվում է Կանոններով, կամ իրավիճակը հանդիսանում է Կանոնների խախտում, ապա պետք է քննարկեք այդ իրավիճակը Կանոնների 5-րդ բաժնում նշված հաղորդակցության ուղիներով:

## 2. ԲԻԶՆԵՍԻ ՊԱՏԱԿԱՆԱՆՈՒ ՎԱՐՈՒՄ

### 2.1. Օժանդակում Կիվա-ի ռազմավարության իրականացմանը

Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարների գործողություններն ուղղված կլինեն իր ռազմավարական նպատակներին հասնելու գործում Վիվա-ին աջակցելուն:

### 2.2. Շահերի բախման կարգավորում և այլ աշխատանքային գործընթացներ

Մենք չենք կարող թույլ տալ, որ անձնական շահերը, օրինակ՝ հաճախորդի, մատակարարի, մրցակցի, գործընկերոջ կամ Վիվա-ի այլ աշխատակցի հետ անձնական հարաբերությունները, փաստացի ազդեցություն ունենան մեր աշխատակիցների՝ Վիվա-ում աշխատելու ընթացքում արդար և օբյեկտիվ որոշումներ կայացնելու ունակության վրա, կամ որ նման ազդեցության տպավորություն ստեղծվի:

Մատակարարները պետք է խուսափեն շահերի ցանկացած բախումից, որը կարող է բացասաբար ազդել Ընկերության հետ գործարար հարաբերությունների վրա, իսկ երբ դա հնարավոր չէ, Ընկերությանը տեղեկացնեն այն փաստացի կամ հնարավոր շահերի բախումների մասին, որոնք կարող են վերաբերել Ընկերությանը:

Մատակարարները կարող են հայտնել շահերի բախման մասին՝ Կանոնների 5-րդ բաժնի համաձայն ուղարկելով տեղեկատվություն «Թեժ գիծ»՝ և (կամ) ծանուցելով Ընկերության կոնտակտային անձանց, որոնք պայմանագրի շրջանակում լիազորված են համագործակցել տվյալ Մատակարարի հետ պայմանագրում նշված կապուղիներով, ձևով և ժամկետներում:

Ընկերությունում թույլատրվում է տրամադրել և ընդունել նվերներ և գործարար հյուրընկալություն, այդ թվում՝ միջոցառումների հրավերներ, եթե դրանք համապատասխանում են հետևյալ չափանիշներին. ունեն օրինական բիզնես նպատակ և համապատասխանում են գործարար պրակտիկայի (վարվելակերպի) սովորույթներին, ուղղված չեն ապօրինի արտոնությունների և նախապատվությունների տրամադրմանը, կանոնավոր չեն և ողջամիտ արժեք ունեն, Էքստրավագանտ (շքեղ) չեն: Մատակարարները պարտավորվում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն չառաջարկել նվերներ, գործարար հյուրընկալություն Ընկերության աշխատակիցներին կամ ներկայացուցիչներին՝ նրանց վրա ազդելու նպատակով կամ բանակցություններ, մրցակցային ընթացակարգեր իրականացնելու, պայմանագիր կնքելու կամ բիզնես որոշումներ կայացնելու ընթացքում:

Այն դեպքերում, երբ Ընկերության աշխատակիցներն իրավունք չունեն նվեր ընդունելու, Վիվա-ն ակնկալում է Մատակարարների ըմբռնումը և երաշխավորում է, որ նվերի վերադարձը ոչ մի կերպ չի ազդի հետագա համագործակցության և ղեկավարության որոշումների կայացման վրա՝ կապված Մատակարարների ընտրության և նրանց հետ համագործակցության հետ:

### 2.3. Պայմանագրային հարաբերություններ և Մատակարարների ստուգում

Վիվա-ում արգելված է ցանկացած ոչ պայմանագրային հարաբերություն, մասնավորապես գործող օրենսդրությամբ չնախատեսված ցանկացած գրավոր կամ բանավոր պայմանավորվածություն: Վիվա-ի և Մատակարարների միջև կնքված ցանկացած պայմանագիր կամ համաձայնագիր պետք է կնքվի գրավոր՝ Վիվա-ի ներքին ընթացակարգերին և օրենսդրությանը համապատասխան:

Վիվա-ն հույս է հայտնում, որ բոլոր Մատակարարները շահագրգռված են պայմանագրի/լրացուցիչ համաձայնագրի/պատվերի պայմանների լիարժեք, ժամանակին և որակյալ կատարմամբ:

Վիվա-ն Մատակարարներից ակնկալում է երաշխիքային ծառայության պայմանների, SLA (Service Level Agreement) լիարժեք ծավալով, պատշաճ որակով և ժամանակին կատարում:

Վիվա-ն Մատակարարներից ակնկալում է մասնակցել Մատակարարների ընտրության ընթացակարգերին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, մասնավորապես պահպանելով իր առաջարկի վավերականությունը Մատակարարի՝ որպես ընթացակարգի հաղթող հաստատվելուց հետո, ժամանակին ստորագրելով պայմանագիր/լրացուցիչ համաձայնագիր/պատվերը, ինչպես նաև աջակցելով հակաօրինական կամ ոչ էթիկական վարքագիծ չհանդուրժող մշակույթի պահպանմանը:

Վիվա-ն ներկայացնում է Վիվա-ի ինչպես հավանական, այնպես էլ գործող Մատակարար հանդիսացող անձանց հուսալիության նկատմամբ պահանջներ: Նախքան պայմանագրի կնքումը Մատակարարները պետք է Վիվա-ի կողմից անցնեն ռիսկերի համապարփակ ստուգում: Մատակարարի հետ փոխգործակցություն սկսելու կամ հետագա փոխգործակցությունը շարունակելու մասին որոշում կայացնելիս կիրառվում է ռիսկերի գնահատման մոտեցում: Վիվա-ն ակնկալում է Կողմերի աջակցությունը ստուգումն անցնելու և, անհրաժեշտության դեպքում, հուսալի տեղեկատվություն տրամադրելու հարցում՝ ի պատասխան համապատասխան հարցումների՝ փոխգործակցության ցանկացած փուլում:

Վիվա-ն ակնկալում է, որ Կապալառուները Վիվա-ին կտեղեկացնեն Վիվա-ի անունից և/կամ Վիվա-ի օգտին գործողություններ կատարելու համար երրորդ անձանց ներգրավման մասին, կիրառել առևտրային բարեխիղճ պրակտիկաներ՝ երրորդ անձանց ընտրության ժամանակ, վերջիններիս նկատմամբ կիրառել սույն կանոններում շարադրված սկզբունքները և հաղորդել նրանց հետ աշխատելու հնարավոր ռիսկերի մասին:

### 2.4. Անբարեխիղճ առևտրային աշխատանքային գործընթացներ

Վիվա-ն հուսով է, որ Մատակարարը նույնպես ձգտում է զարգացնել գործընկերային հարաբերությունները ինչպես ռազմավարական, այնպես էլ փոխգործակցության ընթացիկ հարցերի կարգավորման համար: Վիվա-ն ակնկալում է Մատակարարներից ստանալ տեղեկատվություն Վիվա-ին սպառնացող նրանց հայտնի հնարավոր վտանգների, ռիսկերի կամ կորցրած հնարավոր շահույթի մասին:

Ըստ Ընկերության պահանջների՝ Վիվա-ի աշխատակիցների հետ փոխգործակցությունը պետք է իրականացվի միայն նրանց պաշտոնական պարտականությունների շրջանակներում և միայն Վիվա-ի շահերից ելնելով: Ընկերությունը կտրականապես արգելում է աշխատակիցների նկատմամբ անօրինական ազդեցությունը՝ միտված նրանց դրդելու գործել ի շահ որևէ Մատակարարի և ի վնաս Վիվա-ի շահերի կամ այլ նպատակով՝ առաջարկելով դրամական (կամ այլ նյութական) փոխհատուցում, սպառնալիքների կամ այլ օրինական գործողությունների միջոցով:

Վիվա-ում բիզնես էթիկայի սկզբունքներին հավատարմությունը հանդիսանում է կորպորատիվ մշակույթի հիմքը: Ընկերությունում գործում են Վիվա-ի գործարար վարքագծի և էթիկայի Կանոնները, որոնք տեղադրված է Վիվա-ի կայքում և հասանելի են բոլորին: <sup>2</sup>Նշված Կանոնները սահմանում են կոլեգաների, հաճախորդների, գործընկերների և արտաքին լսարանների հետ շփվելու

<sup>2</sup> «Վիվա Արմենիա» ՓԲԸ Գործարար վարքագծի և էթիկայի կանոններ

հիմնական սկզբունքները, չափորոշիչները և կանոնները: Վիճակ-ն ակնկալում է, որ Մատակարարների գործողությունները չեն հակասի Գործարար վարքագծի և Էթիկայի կանոններին:

## 2.5. Վիճակ-ի և Երրորդ անձանց ակտիվների պաշտպանություն

Գործնական հարաբերությունների ընթացքում գաղտնի տեղեկատվությանը մուտքի իրավունք ստացած Մատակարարները չպետք է տրամադրեն այդ տեղեկատվությունը որևէ մեկին, եթե չեն ստացել դրա թույլտվությունը Վիճակ-ից: Մատակարարները չպետք է կնքեն առևտրային գործարքներ արժեթղթերով կամ աջակցեն մյուսներին այդ գործարքներում Վիճակ-ից ստացած գաղտնի տեղեկատվության հիման վրա: Եթե Մատակարարը կարծում է, որ ստացել է Վիճակ-ի գաղտնի տեղեկատվությանը մուտքի իրավունքը սխալմամբ, ապա Մատակարարը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Վիճակ-ի այն աշխատակցին, որի միջոցով նա կապ է հաստատում Վիճակ-ի հետ, և պետք է զերծ մնա տեղեկատվության հետագա տարածումից:

Վիճակ-ն պաշտպանում է մեր մտավոր սեփականությունը և հարգում շուկայի այլ մասնակիցների մտավոր սեփականության իրավունքը:

Ընկերությունը չի օգտագործում Երրորդ անձանց մտավոր սեփականությունը առանց նրանց թույլտվության և ակնկալում է իր Մատակարարներից պահպանել հեղինակային իրավունքները և մտավոր սեփականության ոլորտի նորմատիվային իրավական ակտերը:

Եթե Մատակարարին հայտնի է դարձել իր կամ Վիճակ-ի նկատմամբ պարտավորությունները կատարելու համար իր կողմից ներգրավված անձանց կողմից Վիճակ-ի մտավոր սեփականության օբյեկտների անօրինական օգտագործման մասին, ապա Մատակարարը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Վիճակ-ի այն աշխատակցին, որի միջոցով նա կապ է հաստատում Ընկերության հետ: Ընկերությունն ակնկալում է, որ եթե Մատակարարին հայտնի դառնա այլ անձանց կողմից Վիճակ-ի մտավոր սեփականության օբյեկտների անօրինական օգտագործման մասին, ապա Մատակարարը նույնպես այդ փաստի մասին կհայտնի Ընկերությանը:

Վիճակ-ն ակնկալում է, որ Մատակարարը, որին հասանելի է դարձել Վիճակ-ի ստեղծվող կամ մշակվող դեռևս իրավական պաշտպանություն չստացած մտավոր սեփականության օբյեկտների մասին տեղեկատվությանը, կդիտարկի տվյալ տեղեկատվությունը որպես գաղտնի, այդ տեղեկատվությունը չի տրամադրի որևէ մեկին, եթե դրա թույլտվությունը չի ստացել Վիճակ-ից և ձեռնպահ կմնա այդ տեղեկատվությունը օգտագործելուց, եթե այդպիսի օգտագործումը կարող է վնաս պատճառել կամ անցանկալի լինել Վիճակ-ի շահերի պաշտպանության և ապահովման տեսանկյունից:

## 3. ՕՐԵՆՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄ

### 3.1. Օրենսդրության պահպանում

Ընկերության Մատակարարներն իրենց գործունեությունը պետք է իրականացնեն այն երկրների օրենսդրությանը համապատասխան, որտեղ նրանք իրականացնում են իրենց բիզնեսը:

### 3.2. Կոռուպցիայի և կաշառակերության ցանկացած ձևի արգելում

Ընկերությունը չի հանդուրժում կաշառակերության կամ կոռուպցիայի որևէ ձև:<sup>3</sup>

Վիճակ-ն իր Մատակարարներից ակնկալում է, որ նրանք կիրականացնեն իրենց գործունեությունը, այդ թվում՝ պետական կազմակերպությունների և պետական պաշտոնյաների հետ փոխգործակցության ժամանակ, խստորեն պահպանելով կիրառելի Զակակոռուպցիոն օրենսդրության դրույթները և Գործնական Էթիկայի և հակակոռուպցիոն համապատասխանության պահանջները,<sup>4</sup> և չեն ձեռնարկի որևէ գործողություն, որով կարող են խախտվել այդ օրենսդրության պահանջները կամ որը կարող է Վիճակ-ի կողմից նման խախտման պատճառ դառնալ:

<sup>3</sup> Կոռուպցիա՝ Ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործողություն՝ կապված դրամական միջոցներ, ցանկացած տեսակի ֆինանսական օգուտ, արժեք կամ առավելություն առաջարկելու հետ, որը դրսևորվում է կաշառք կամ կոմերցիոն կաշառք տալով և/կամ ստանալով, կաշառքի կամ կոմերցիոն կաշառքի միջնորդությամբ, պաշտոնեական դիրքի չարաշահմամբ կամ կոռուպցիոն համարվող այլ ձևով և նպատակ ունի ազդել ստացողի գործողության (անգործության) վրա, դրդել պաշտոնեական պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը, և/կամ ստանալ անհիմն առևտրային կամ այլ առավելություն կամ օգուտ, և/կամ ստանալ վարձատրություն այդպիսի պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար:

<sup>4</sup> Զակակոռուպցիոն համապատասխանություն (հակակոռուպցիոն համապատասխանության համակարգ)՝ Ընկերության նկատմամբ կիրառվող հակակոռուպցիոն օրենսդրության պահանջների պահպանման նպատակով Ընկերության կողմից մշակված միջոցառումների և գործընթացների համակարգ:

Ընկերությունն ակնկալում է, որ Մատակարարները կկիրառեն և կիրականացնեն հակակոռուպցիոն համապատասխանության բավարար և արդյունավետ ծրագիր:

### 3.3. Հակամենաշնորհային օրենսդրության պահպանում

Վիվա-ն արգելում է Մատակարարների հետ համաձայնագրերը, որոնք ուղղված են մրցակցության սահմանափակմանը կամ վերացմանը: Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարները չեն կհամագործակցի Վիվա-ի աշխատակիցների հետ՝ նման համաձայնագրեր կնքելու համար:

Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարները կպահպանեն արդար մրցակցության սկզբունքները համագործակցության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ Մատակարարի ընտրության ժամանակ, ներառյալ՝ գնումների գործընթացները (միցույթներ, առաջարկների հարցումներ և այլն):

Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարները կկանխեն ցանկացած հակամրցակցային գործողություն (կարտելի կնքում, այլ հակամրցակցային համաձայնագրեր, արգելված «ուղղահայաց» համաձայնագրեր, շուկայում համաձայնեցված գործողություններ, անբարեխիղճ մրցակցության ակտեր), որն ուղղված է մրցակցությունը սահմանափակելուն և Վիվա-ի կամ հաճախորդների, գործընկերների կամ Վիվա-ի այլ Մատակարարների շահերը ոտնահարելուն, այդ թվում՝ կապված գների, ներառյալ՝ աճուրդների գների, շուկայի բաժանման, առանձին գնորդների հետ պայմանագրեր կնքելուց հրաժարվելու և հակամենաշնորհային օրենսդրությամբ նախատեսված այլ հարցերի հետ:

### 3.4. Առևտրային սահմանափակումներ

Վիվա-ն խստորեն հետևում է միջազգային առևտրի ոլորտում կիրառելի օրենսդրությանը և նորմատիվային պահանջներին, այդ թվում՝ արտահանման վերահսկողության և առևտրային սահմանափակումների ոլորտում: Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարը կաջակցի այնպիսի մշակույթի պահպանմանը, որը չի հանդուրժում միջազգային առևտրի ոլորտում կանոնների խախտումներ Վիվա-ի հետ բիզնես վարելիս, այդ թվում՝ վերջինիս անունից կամ շահերից գործելիս՝ անհրաժեշտ երաշխիքներ և հավաստիացումներ տրամադրելու միջոցով:

### 3.5. Թափանցիկ հաշվառում և հավաստի տեղեկատվության տրամադրում

Վիվա-ն ձգտում է, որ հաշվապահական գրքերը, հաշվետվությունները, հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները վարվեն պատշաճ մանրամասնությամբ, ճիշտ ներկայացնեն Ընկերության գործողությունները՝ օրենսդրությանը և ներքին վերահսկողության համակարգին համապատասխան և նույնն ակնկալում է իր Մատակարարներից: Մատակարարի կողմից նշվող բիզնես տեղեկատվությունը, այդ թվում՝ գնումների փաստաթղթերի և պայմանագրերի պահանջներին համապատասխան տրամադրվող տեղեկությունները, պետք է միշտ լինեն ճշգրիտ, ժամանակին, ամբողջական, արդար և հասկանալի: Վիվա-ում արգելվում է փաստաթղթերի կեղծումը, ցանկացած գործողությունների իրական բնույթի խեղաթյուրումը:

## 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

### 4.1. Կայուն զարգացում եւ ազդեցություն տեղական համայնքի վրա

Վիվա-ն ակնկալում է, որ Մատակարարներն իրենց գործունեության ընթացքում որպես ընդհանուր նպատակ ձգտում են կայուն զարգացման գործում իրենց ներդրումն առավելագույնի հասցնել: Վիվա-ն ողջունում է կայուն զարգացման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքների ինտեգրումը Մատակարարների գործունեության մեջ՝ հաշվի առնելով հիմնական շահագրգիռ կողմերի շահերը: Մատակարարների կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (այսուհետ՝ ԿՍՊ) ենթադրում է թափանցիկ և էթիկական վարքագիծ, որը նպաստում է կայուն զարգացմանը, համապատասխանում է գործող օրենսդրությանը և վարքագծի միջազգային չափանիշներին:

Վիվա ընկերությունը հավանություն է տալիս Մատակարարների կողմից կայուն զարգացման և ԿՍՊ ոլորտում արդյունավետ կառավարման միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ ԿՍՊ հարցերի

ինքնազնահատմանը, միջազգային GRI ստանդարտներին համապատասխան ոչ ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը:

## 4.2. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Վիվա-ն ողջունում է Մատակարարների հարգալից վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Վիվա-ն ակնկալում է, որ իր Մատակարարները ունեն արդյունավետ բնապահպանական քաղաքականություն, ինչպես նաև պահպանում են շրջակա միջավայրի պահպանման մասին գործող օրենսդրությունը և նորմերը: Մատակարարները պետք է նախագգուշական մոտեցում ցուցաբերեն բնապահպանական խնդիրների նկատմամբ, իրականացնեն էկոլոգիական պատասխանատվության բարձրացումը խթանող նախաձեռնություններ, և նպաստեն շրջակա միջավայրի պահպանման համար բարենպաստ տեխնոլոգիաների տարածմանը և արտադրանքի կյանքի շրջափուլի իրականացման խելամիտ մեթոդների կիրառմանը:

## 4.3. Մարդու իրավունքներ

Ընկերությունը համապատասխանում է ստորև բերված չափորոշիչներին և ձգտում է աշխատել այնպիսի Մատակարարների հետ, որոնք համապատասխանում են դրանց.

- պարտադիր կենսաթոշակային, սոցիալական և բժշկական ապահովագրության բոլոր ապահովագրավճարների և հարկերի բարեխիղճ վճարում,
- բոլոր մակարդակներում աշխատակիցների համար հավասար հնարավորությունների ապահովում՝ անկախ մաշկի գույնից, ռասայից, սեռից, գենդերային ինքնությունից, տարիքից, էթնիկ պատկանելությունից, ազգային պատկանելությունից, սեռական կողմնորոշումից, ամուսնական կարգավիճակից, կրոնից, հաշմանդամությունից կամ բիզնես որակներին չառնչվող այլ հատկանիշներից,
- աշխատավարձ, որը բավարարում է աշխատակիցների առնվազն հիմնական կարիքները,
- աշխատակիցներին մասնագիտական զարգացման հնարավորությունների տրամադրում,
- օրենքով նախատեսված աշխատաժամանակի պահպանում և արտաժամյա ժամանակի փոխհատուցում՝ տեղական օրենսդրության նորմերին համապատասխան,
- հարգալից վերաբերմունք աշխատակիցների միավորումների օրինական ազատության նկատմամբ,
- բանակցությունների վարման և կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի կնքման բոլոր օրինական իրավունքների ճանաչում,
- աշխատանքի պաշտպանության քաղաքականության մշակում, ներդրում և պահպանում, աշխատանքի պաշտպանության հետ կապված և կազմակերպության գործունեության հետևանքով առաջացած ռիսկերի վերլուծություն և վերահսկում:

Վիվա-ն չի հանդուրժում երեխաների անօրինական աշխատանքի, հարկադիր աշխատանքի, պարտքերից կախվածության, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման բոլոր ձևերի օգտագործումը: Վիվա-ն չի համագործակցում որևէ Մատակարարի հետ, որը հայտնի է, որ օգտագործում է աշխատակիցների նկատմամբ անընդունելի վերաբերմունքի մեթոդներ, ինչպիսիք են ֆիզիկական պատիժը, վիրավորանքը, հարկադիր աշխատանքը կամ աշխատակիցների նկատմամբ անընդունելի վերաբերմունքի այլ ձևեր: Վիվա-ն ակնկալում է, որ իր Մատակարարները համապատասխան քայլեր կձեռնարկեն՝ թույլ չտալու իրենց սեփական Մատակարարների կողմից աշխատակիցների հետ վարվելու նման մեթոդներ:

## 5. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիվա-ն իրեն իրավունք է վերապահում ստուգելու սույն Կանոնների պահպանումը, այդ թվում՝ Մատակարարների հետ պայմանագրային հարաբերությունների շրջանակներում փաստաթղթեր և պարզաբանումներ պահանջելով՝ հաշվի առնելով գաղտնիության պահպանումը և անձնական տվյալների պաշտպանությունը և ակնկալում է Մատակարարից շարունակել փոխգործակցությունը նման ստուգման անցկացման շրջանակներում:

Եթե Մատակարարը չի պահպանում սույն Կանոնների, համապատասխան օրենքների և կանոնների դրույթները, Վիվա-ն գործող օրենսդրության շրջանակներում իրավասու է կասեցնել կամ



դադարեցնել համագործակցությունը ընդհուպ մինչև պայմանագրերի լուծում, ինչպես նաև համապատասխան եզրակացություններ անել հետագա համագործակցության համար:

Ընկերությունն ակնկալում է, որ Մատակարարները կտեղեկացնեն այս չափորոշիչների, կիրառելի օրենսդրության, ֆինանսների, հաշվապահական հաշվառման, աուդիտի նորմերի խախտման վերաբերյալ իրենց կասկածների մասին, ինչպես նաև Ընկերությունում կոռուպցիայի կամ խարդախության ցանկացած կասկածների և դեպքերի և այլ լուրջ իրավիճակների մասին, որոնք առնչվում են Վիվա-դժի Էական շահերին կամ Ընկերության աշխատակիցների Էթիկական վարքագծին կամ ֆիզիկական անվտանգությանը:

Մատակարարները կարող են խախտման մասին հաղորդագրություն ուղարկել հետևյալ եղանակներից որևէ մեկով`

- (1) գրել «Թեժ գծի» Էլեկտրոնային փոստի հասցեին` [hotline@mts.am](mailto:hotline@mts.am)
- (2) **0-800 03011** հեռախոսահամարով (ՀՀ)
- (3) Վիվա Արմենիա ՓԲԸ-ի պաշտոնական կայքում տեղադրված « Թեժ գծի» Էլեկտրոնային ձևի միջոցով (անանուն կամ սեփական անունից),

Ընկերությունն ապահովում է սույն Կանոնների պահանջների խախտման վերաբերյալ բոլոր հաղորդագրությունների անկախ և համապարփակ դիտարկումը:

Ընկերությունն արգելում է հետապնդման (կարգապահական պատասխանատվության միջոցներ) ցանկացած ձև այն Մատակարարների նկատմամբ, որոնք բարեխղճորեն հայտնել են խախտման մասին, աջակցել են հետաքննություններին և հրաժարվել են մասնակցել սույն Կանոնների սկզբունքներին կամ պահանջներին հակասող գործունեությանը:

**Վիվա-ն լիազորված է, որ համագործակցության վերոնշյալ սկզբունքները կնպաստեն փոխշահավետ համագործակցությունն ապահովող գործնական հարաբերությունների հաստատմանը, զարգացմանը և պահպանմանը:**